Բ. ՏԱՐԻ — ՇԱԲԱԹ 5 ՅՈՒՆԻՍ 1899 — Թիւ 134

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Պուլկարիոյ համար
Տարեկան 10 Ֆր.
Վեցամսեայ 5 »
Օտարահմանի համար Տարեկան 12 »
Վեցամսեայ 6 »
Ամերիկայի համար
Տարեկան 2.50 տլր.
Վեցամսեայ 1.25 »
ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԵԼԻ
—)(—
Յայտարարութեան տողը 20 սանթիմ է. երեքէն աւելի անգամներու համար 20 0/0 զեղչ կըլլայ.

)(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)(

ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ Յ. ՍՈՒՔԻԱՍԵԱՆ

Նամակ...
R. P. Kal...karian Mechitharistengasse ... Vienne (Autri...)

Редакція на вѣстникъ «Шаржумъ» Варна.
Rédaction du journal «Charjoum» Varna (Bulgarie)

Ձեռագիրները ետ չեն տրուիր

)(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)(

ՄԽԻԹԱՐԱԿԱՆ ԵՐԵՒՈՅԹՆԵՐ

—

Բացասական ձայները շատանում են։ Թոյլ, յուսահատ ու փոքրոգի սրտերը բուի նման վայնասուններ են արձակում. Նրանք ողբում են մեր ներկայ վիճակը, Նրանք յուսահատուած են հայի ապագայի վերաբերութեամբ։

Լացէ՛ք ձեր գլուխը, ողբացէ՛ք ձեր ընկած, ողորմելի վիճակի վրայ, հողով խե՛ղճ արարածներ։ Հայը այլեւս լալկաններ չի ուզում. Նրան զզւելի են "վո՜յ-վո՜յ"ները։ Նա կենդանութեան ապացոյցներ է տալիս, պարզ, զօրեղ ապացոյցներ։

Բուլղարիա, Եգիպտոս, Ամերիկա և նոյնիսկ հայութեան համար կորած Ռումանիան իրար արձագանգ տուին։ Պէտք էր ձայն բարձրացնել, պէտք էր բողոքել, պէտք էր մի անգամ եւս ամէն սրբութիւն շահի տեսակէտից քննող դիւանագիտութեան պարզել, որ իր օգուտն է հայ երկրի վերջնական հանգստութիւնը։

Այս ամէնը պէտք էր հայութեան համար. և հայը՝ մի սիրտ, մի հոգի եղած, շարժուեցաւ։ Աշխարհի մի ծայրից միւսը կայծակի նման թռաւ բողոքի ձայնը։

Գիտեմ, փոքր գործ է. գիտեմ, դա դեռ խի՞ստ չնչին է հայութեան ազատութեան համար... բայց մխիթարական է։

Գլխաւորը բողոքելու սկզբունքը և այդ սկզբունքի գործադրութեան իրական քայլն է։ Այսօր բողոքում ենք դիւանագիտութեան առաջ հեռագրով, թըղթով ու գրչով. վաղը կը բողոքենք բռնակալի արիւնոտ գահի առաջ՝ զէնքով ու արիւնով...

Գլխաւորը մի սիրտ, մի մարմին, մի համերաշխ սարք կազմելն է։ Կա՞յ այդ զգացմունքը, ամրացե՞լ է նա. Մնացած գործը արդէն բաւական հեշտանում է։

* * *

Թող բուերը ողբան, թող յուսահատուածները երեմիական ողբեր կարդան ցաւագարի չեչտերով՝ մխիթարական փաստերն այնուամենայնիւ աճում են։

Վանի, Զէյթունի նեղութիւնն ու սովը ցնցեցին ամբողջ հայութիւնը։

Մի տեղ ժողովարարութիւն, միւս տեղ ստորագրութիւն, երրորդ տեղ նուագահանդէս, մի այլ տեղ ներկայացումներ... ամէն կողմից կարկուտի պէս տեղացին ու դեռ տեղում են։

Երիտասարդութիւնը գլուխ է անցել գործին։ Հասարակ ու միջին դասակարգերը ոյժ ունեցուկ են հանդիսանում նրան։ Աղաները սկսել են խոնարհւիլ ժողովրդական այդ զօրեղ հոսանքի առաջ։ Հեռու չէ այն օրը, երբ նրանք էլ ստիպուած պիտի տարուին ազգային լայն հոսանքից, նրանք էլ պիտի հայանան, գէթ մի քիչ ազգային զգացմունք ու եռանդ ունենան։

Այսօր տալիս են միայն սովամահներին փրկելու համար։ Վաղը կըտան զէնքի համար, որ նորից սով չծնեցնէ բռնակալը։

Կայծը վաղուց է ընկած, պէտք է ոյժ տալ նրան։ Ամէն տեղ, ամէն առթից օգտուելու է, որ համերաշխ ընդհանուր ազգային ոգին լայնանայ, արմատանայ։

Կայծը բաւական մեծացել, կրակ է դառել. պէտք է բորբոքել, հրդեհ դարձնել, մի հրդեհ, որ իր բոցերի մէջ լափէ անզգամներին, վատերին, դաւաճաններին ու բռնակալութիւններին։

Բորբոքենք կրակը։

ԳԱՍՊԱՐ

ՀԱՅԵՐՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԷՋ

—

Ամերիկայի հայերու մասին շատ անգամ գրուեր է, սակայն անգամ մը եւս գրելը աւելորդ չէ։

«Ամերիկայի հայեր» ըսելով պէտք է հասկնալ գլխաւորապէս Հայաստանի այլեւայլ կողմերէն հաւաքուած երիտասարդներու և պատանիներու բազմութիւն մը, մեծ մասն անուս գեղջուկներ։ Ասոնցմէ շատերը հարկահաններու և վաշխառուներու պահանջներէն խոյս տուածներ են, որ կամ փախեր են ընդ միշտ, կամ եկեր են ժամանակով՝ քիչ մը ստակ շահելու, հարկերն ու պարտքերը վճարելու համար։ Երկրորդ մասը ալ կայ որ հալածուելով Թուրք բռնակալութենէն, ապաստանած է հոս։ Իսկ երրորդ մասը եկած է հոս հանգիստ կեանք մը ունենալու, սակայն ընդհանրապէս ցաւ և թըշուառութիւն է գտած։

Ամերիկայի հայերու թիւը շուրջ 18,000 է, որոնց մէջ 300 ընտանիք կայ. Մնացեալները երիտասարդներ ու պատանիներ են։

Զբաղմունքնին գլխաւորապէս գործաւորութիւն է։ Կաշխատին մեքենագործութեան, կօշիկի, խաղախորդի, մետաքսի և այլ գործարաններու մէջ։ Շատ քիչերը սեփական գործ ունին։ Պօսթոնի և Նիւ-Եորքի մէջ քանի մը հարուստ հայ վաճառականներ ունինք։

Հայ գործաւորի կեանքը ծանր է ու դառն։ Կան թեթեւ ու մաքուր աշխատանքներ ալ, բայց ոչ հայերու համար. ատոնք կը տրուին տեղացիներուն։ Հայ գործաւորը օրական 10 ժամ, շատ յաճախ ալ 13 ժամ անդադար կաշխատի ապականուած մթնոլորտին մէջ։ Քա՞նի առոյգ երիտասարդներ գործարաններու զզուելի մթնոլորտէն տկարացած, հիւծած ու մաշած՝ վաղաժամ մտեր են օտար հողին գիրկը... քանի՜ներ կորսնցուցեր են իրենց աչքը, ոտքը, ձեռքը... խի՜ստ երկար պիտի ըլլար այդ դժբախտ պատահարներու նկարագրութիւնն ընելը։

Հայ գործաւորներու ներքին կեանքն աւելի անտանելի է։

Ահա դարչահոտ տուն մը որուն մէջ կը բնակին խումբ մը գեղջուկ հայ գործաւորներ։ Ամէնքն ալ խմբովին մէկ սենեակի մէջ կը պառկին. անմաքուր, օդը ապականուած... անցնինք միւս սենեակը, ուր խոհանոցը և սեղանատունն է. հոն կեփեն, հոն ալ կուտեն։ Հոս է գաղտնիքը, որ ամերիկացի բանւորը չի կրնար դրամ հաւաքել, իսկ հայը կրնայ։ Ասանկ չի կրնար ապրիլ ամերիկացին կամ եւրոպացին, իսկ հայը կապրի։ Ասանկ տուն-խոհանոցներու մէջ ապրելով, հայերը կրնան օրական 60 սէնթով բաւականանալ, իսկ եւրոպացի կամ տեղացի գործաւորը բոլոր օրավարձը կը ծախսէ։ Խնայողութի՞ւն է ասիկա հայերուն կողմէն, թէ կծծիութիւն՝ չեմ գիտեր, ինքներդ դատեցէք։ Ճաշարաններ ալ կան, բայց անոնց կերակուրները ամենեւին սնունդ չեն պարունակեր։

Ինչպէս ըսածներս գործաւորներու մեծամասնութեան վրայ է. կան խիստ քիչ անձեր, որ մարդավայել ապրուստ մը ունին։

Երբ փողոց ելլէք. հոն պիտի հանդիպիք դանդաղ ու գլխիկոր քալողներու. տժգոյն, դեղնած ու նիհար կերպարանքնին կարծել կուտայ, որ երէկ են ելած հիւանդանոցէն։ Ատոնք հայ գործաւորներ են։ Հարցուցէք իրենց. երբեք հիւանդ եղած չեն, միայն բաւական ատեն այն ինչ գործարանին մէջ են աշխատած...

Այս է Ամերիկայի հայ գործաւորին կեանքը. ով կը փափաքի հոս գալ, պէտք է պատրաստ լինի ասանկ կեանք մը վարելու։

Անպատճառ հարցնողներ կըլլան, թէ մի՞թէ չկան լաւ ապրողներ, լաւ հագուողներ...։ Այո՛, կըսենք մենք. ինչպէ՞ս չէ, կան։ Ատոնք ամերիկեան բառով "սբորդմէն" կը կոչուին, այսինքն միայն զուարճութեան ետեւէ ընկնողներ։ Անոնք ծանր ու աշտոտ գործեր չեն ըներ. համեմատաբար լաւ գործ ունին և առատ ստակ կը շահին։ Շա՜տ քիչ բացառութիւններով ատոնք ամէնն ալ բաքոսի յաւիտենական երկրպագուներ, շռայլներ ու անառակութեան գիրկն ընկածներ են։ Սա չափը պարզ է. ազատութիւնը բոլորովին սխալ ըմբռնած, հայութեան համար կորած, մեռած տարր մը դարձած են անոնք։

Միակ մխիթարութիւնը Ամե-

րիկայի հայերու նոր ուղղութեան ազնիւ երիտասարդութիւնն է։ Ասոնք թուով քիչ են, բայց խիստ մեծ տեղ մը կը բռնեն հրապարակի վրան։

Ասոնց ջանքերու շնորհիւ լսարաններ կը կազմուին, գրադարաններ ու ընթերցարաններ կը հիմնուին, ազգօգուտ ընկերութիւններ կը կազմակերպուին։ Ամէնէն վերջն ալ «Հայրենիք» և «Տիգրիս» թերթերը լոյս ընծայեցին, որոնցմէ շատ բան կըսպասուի Ամերիկայի հայոց խարխուլ կեանքի վերաշինութեան տեսակէտով։

Մխիթարական երեւոյթ մըն ալ այն է, որ Ամերիկայի հայ գործաւորը խելքը գլուխը ժողվել սկսած է. վերջերս սկսած են խմբովին հայրենիքի ծոցը վերադառնալ, հոն ապրելու համար։ Ոյժ տալու է այդ հոսանքին։

ԲՐՈՒՏ

ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՌՈՒՍՉՈՒՔԻՑ

—

Գ.

Մեր անցեալ երկու յօդւածները զանազան թիւրիմացութիւնների տեղիք են տւել։ Տեսնել չարին մտքեր, սրան նրան վիրաւորելու կամ ստորացնելու ձգտումներ և այլն, խի՜ստ անարդար կը լինէր։ Մեր գրածները միայն թռուցիկ տպաւորութիւններ են, որոնց շատ մանրամասնութիւնները կարող են անճիշդ լինել. այդ մենք խոստովանում ենք. բայց կուսակցութիւններին քար նետել մութ անկիւններից, անհատներին չրպարտել... ներողութիւն, մենք չենք ստորացնի երբէք մեր գրիչը...

∴

Ի հարկէ ամէն մի ռուսչուքցի կըսպասէր իրենց օրւայ խնդրի, այրող դպրոցական խնդրի համար մի կարծիք։ Լա՛ւ, դրա մասին էլ մի քանի խօսք ասենք։

Երբ ես մտայ եկեղեցու բակը, երբէք իմ մտքովս չանցաւ, որ մի շարք ցա՜ծ, խարխուլ ու ողորմելի շինութիւնը կարող էր դպրոց լինել։ Այո, պարզւեց, որ դա էր դպրոցը... ազգային դպրոցը։ Այնտեղ հոյթեր կարելի է կապել և ոչ մատաղ սերունդ կրթել... ցած, մութ սենեակներ. օդը զարշ[…], խոնաւ յատակով, կոտրատած տախտակներով և անդրջրհեղեղեան կահկարասիներով, երձքոտանի աթոռներով... Աղջկանց բաժինը աւելի վատ... իմ խորին համոզումս է. որ հազար անգամ գերադասելի է ունենալ մէկ կամ երկու ուսուցիչ, մէկ կամ երկու դասարան՝ միայն բոլորն էլ կանոնաւոր, յարմար իրենց կոչման, քան շատ դասարաններ և ուսուցիչներ այդպիսի պայմաններում. դէթ մանուկները չեն փչանայ Ֆիզիքապէս։

∴

Բաց եմ անում 1897ի «Խրատունք» թերթի թիւ 42ը և 43ը։ Ի՞նչ եմ գտնում. մի երկա՜ր ցուցակ հանգանակութեան, 18,823 ֆրանքի մի պատկառելի համագումարով, ու «Մնանք խորին յարգանօք՝ ի դիմաց տեղւոյս (Ռուսչուքի) դպրոցշինութեան յանձնաժողովոյ Ատենապետ՝ Յ. Ասլանեան, Ատենադպիր՝ Ն. Գ. Բէստանեան»— երկար ստորագրութիւնն էլ տակը դրւած՝ 1897 թւի Յուլիս 4ին։

Տաք ամիս է յուլիսը. երեւի տաքութիւնից չոգիացել են չորս հազարներ, հազարներ ու հինգ հարիւրներ ստորագրող տրամադրութիւնները... Ո՞ւր են այժմ այդ ստորագրողները. ինչո՞ւ ստորագրեցին ու այդ մարագները չեն վերաշինում. ինչո՞ւմն է այդ գաղտնիքը... Պ. Ատենապետ — պատասխանեցէք. ո՞ւր մնացին ստորագրութիւնները և «Դպրոցշինութեան Յանձնաժողովը»... Ախ հայե՜ր, հայեր—խիստ լաւ էք ստորագրելու, ասելու, պոռալու, բայց իրականացնելու մէջ էլ խի՜ստ, խիստ վատ էք...

∴

Ուսուցման ոչ մի իր. ոչ մի առարկայ գոյութիւն չունի, չէնքն էլ ա՜յդքան խայտառակ, նստարաններն աւելի վատ... դպրոցի ծրագրի մէջ կայ հայերէն, բուլղարերէն, ֆրանսերէն, ալճէբրա... իսկ տեղացի բոլոր մանկիկները թրքախօս են... ուսուցումը շրջապատուած է ա՜յնքան դժոխային պայմաններով։

Ուրեմն ո՜րքան ծիծաղելի թւաց ինձ, երբ «Շարժում»ի թւերից մէկում կարդացի դպրոցի «պաշտպաններից» մէկի վառաբանութիւնը. Ռուսչուքի դպրոցը կարող է մրցել Եւրոպական իր տեսակի դպրոցներից ամէնալաւերի հետ՝ մօտաւորապէս ասած էր այդ յօդւածում։ Իմ ծիծաղս միայն մի պատճառն ունեմ և բաւ է այդքանը։ Այդպիսի խառնափնթոր ծրագրով, այդպիսի խողանոցային չէնքով ու կահկարասիներով դպրոցներ չկան Եւրոպայի մէջ... Երբ չկայ, ուրեմն համեմատել էլ չի կարելի... վերջացա՜ւ։

∴

Մի քանի խօսք էլ և վերջ. Տնօրէնի մի խնդիր կայ մէջ տեղը. Շատերը դժգոհ են, ծայրայեղ դժգոհ։ Մի քանիսն էլ պաշտպան են. Տնօրէնը դարձել է մի տեսակ կռւախնձոր։

Դժգոհները պնդում են, որ Տնօրէնը դպրոցում անվայել խօսքեր է ասում նոյնիսկ մատաղ սաներին ու սանուհիներին։ Պնդում են, որ ծեծում է, նոյնիսկ արիւն հանելու չափ առաջ է գնում... թեւերը գործ է դրել մի վարժապետի և մի աշակերտի մեծ եղբոր դէմ...

Որքան ճիշդ են այս ամէնը՝ ես չգիտեմ և չեմ կարող դրականապէս երաշխաւորել, կրքերը սրցել, բորբոքւել են. ո՞վ գիտէ որքան չափազանցութիւններ կը լինին մէջը...

Այսքանը միայն կասեմ, որ եթէ ես լինէի տնօրէն և եթէ նոյնիսկ հիմնական սուտ լինէին այդ ամէնը՝ չէի մնայ Ռուսչուք։ Չկա՞յ ուրիշ քաղաք, չկա՞ն ուրիշ հայ դպրոցներ... կերթայի մի ուրիշ տեղ, համոզւած լինելով, որ ոչ մի օգուտ չեմ կարող տալ այնտեղ, ուր այդքան սուտ կամ ճիշդ լուրեր կան իմ մասին, ուր ա՜յդքան թշնամիներ ունիմ... գոնէ իմ անհատական զգացմունքներս այդ են թելադրում ինձ։

Գ.

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Սոֆիա, 30 Մայիս

Մայիս 29ի գիշերը՝ Սլավեանսքա—Բեսեդա սրահին մէջ չքեղ նուագահանդէս մը սարքեցաւ ի նպաստ հայ սովեալներու։ Սոֆիայի բարձր դասակարգն իր ներկայութեամբ փայլ տուաւ հանդէսին։ Ներկայ էին դեսպանական մարմնի անդամները իրենց ընտանիքներով, զինուորական բարձրաստիճան սպաներ եւ երեսփոխաններ։

Երգիչ Պ. Օգոստինոսեան չոչափելի

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՏԵՂԱՑԻ ՀԻՆ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԸ. ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԱՊԱԳԱՆ

—

Թաւրիզ, 6 Մայիս

Հին ուսուցիչների մասին մի գաղափար կազմելու համար դիմեցի առաջնորդարանում պահված արձանագրութեան տոմարներին եւ այն տեղ կարդացի Ղալայի ուսուցիչների ստորագրութեան տակ գրված ստորագրող տողերը. եւ այսօր այդ պարոն ուսուցիչները, շնորհիւ խնամիներին, ուսուցչական սուրբ պաշտօնն են վարում, ի վնաս մատաղ սերնդի։

Ղալա թաղի անարժան ուսուցիչների (մեծ մասամբ տեղացի) ստոր բնաւորութիւնը ընթերցողի առաջ պարզելու համար, յիշեմ հետեւեալ բնորոշ իրողութիւնը, քաղված վերոյիշեալ արձանագրութեան պաշտօնական տոմարից։

94 թուին այդ ուսուցիչներից մի քանիսը Ղալայի դպրոցում պաշտօն են ունեցել եւ անկարգութիւնների պատճառ դառնալով Պ. տեսչի բողոքներին տեղիք են տվել, որով խնդիրը քննվել է հոգաբարձական ժողովում Սուքիաս եպիսկոպոսի նախագահութեամբ։ Հոգաբարձական ժողովը Պ. տեսչի բողոքներին իրաւունք տալով, որոշում է արտաքսել այդ խայտառակ եւ անարժան ուսուցիչներին, եւ հեռագրով Թիֆլիսից նոր ուսուցիչներ է պահանջում։ Սակայն ուսուցիչները այլ եւ այլ խնամիների օգնութեան դիմելով, Սուքիաս եպիսկոպոսի սիրտը շահելով՝ ստորացել են այդ տոմարում արձանագրել եւ ստորագրել թէ ընդունում են իրանց յանցանքը եւ թէ խոստանում են հպատակվել հոգաբարձական եւ տեղական անօրինութիւններին...։ Ի՛նչ ցածութիւն. մանաւանդ եթէ ի նկատի ունենանք, որ այդ ստոր արարածներից մէկը պաշտօնից հրաժարվել էր եւ միւսն էլ գրել էր, թէ պէտք է հրաժարվի տարուայ վերջը։ Եւ սրանք լիզելով իրանց թքածը, ստորագրել են արձանագրութեան տոմարում իրանց հպատակվելը առաջարկված պայմաններին. մինչեւ այսօր դպրոցի շէմքից դուրս չեն եկել..., եւ պարզ է, որ եթէ դպրոցից դուրս գան՝ քաղցած պիտի մնան։

Սակայն այս չէ էական բնորոշ իրողութիւնը։ Այդ ուսուցիչների իսկապէս անարժան լինելը յայտնըվում է նրանով, որ Սուքիաս եպիսկոպոս ինքը Նոր-Դարական լինելով հանդերձ, ստիպվել էր նրանց դպրոցից արտաքսել, թէեւ նրանք էլ Նոր-Դարականներ են։ Ահա այս միակ դէպքը բաւական է մեր ասածների ճշմարտութիւնը վկայելու եւ ապացուցանելու։ Տեղացի ուսուցիչների այդ ստոր դասակարգը մտաւոր եւ բարոյական պաշարից բոլորովին զուրկ, պարզ իմաստակ—անբարոյականներ են, հետեւում են վերջին ծայր յետադէմ—պահպանողական ուղղութեան։ Նրանց կողմից ոչ մի ջանք եւ աշխատութիւն չի լինում ժողովրդի զարգացման եւ առաջադիմութեան գործի համար։ Իսկ եթէ խնդիրը քանդելու եւ խառնակելու վրայ լինի, անմիջապէս պատրաստ են իրանց աջակցութիւնը եւ բազուկը նուիրելու, բաւական է, որ իրանց հացի խնդիրը չը վտանգուի։

Աւելին կայ. այս ստոր արարածները զինվում են իրանց թունալից նետերով այն ամէն օտարական հայերի դէմ, որոնք ազնիւ զգացումներով եւ վսեմ գաղափարներով ուզում են գործել հայ հասարակութեան օգտի եւ զարգացման համար, մանաւանդ այն օտար երկրացի ուսուցիչների դէմ, որոնք պատկանում են Մշակականներին, առաջադէմ-ազատական կուսակցութեան։ Աշխատում են ագէտ եւ ոչխարամիտ ժողովրդի առաջ նրանց վարկը գցել՝—անկրօններ են, օտարներ են, եւայլն ասելով։ Ո՞վ կեղծ բարեպաշտնե՛ր... ո՞վ փարիսեցինե՛ր... մինչեւ ե՞րբ ձեզ պիտի աջողվի ժողովուրդը խաբել, նրա ազնւութիւնը շահագործել եւ նրան կեղեքել նիւթապէս ու բարոյապէս, եւ ձեր պատկերով ապագայ ստոր սերունդ հասցնե՛լ...։ Այդ ձեզ չի աջողվի՝ Բնութեան անողոք օրէնքն է, որ իր ծոցից միշտ հեռացնում եւ արտաքսում է ձեզ նման փթած անդամներին։ Այո՛, աշխարհի երեսից իսպառ պիտի կորչին ու ջնջուին ձեզ նման ընդհանուրին վնասող պարազիտները։ Աշխարհը ազնիւ, անձնուրաց, առաջադէմ, անշահախնդիր եւ համարձակ գործիչին է հետեւելու, յաղթանակը նրա է տանելու. այո՛, այս է պահանջում

կերպով ապացուցեց, որ հմուտ զեղարուեստագէտ մըն է։ Իր մշակուած ձայնի ամբողջ կորովովը գեղեցիկ կերպով երգեց Վերդիէն կտոր մը, խանդալից, աղուոր կտոր մը։ Երգեց ուրիշ կտորներ ալ, ամէնքն ալ յաջող։ Պարոնի անունը հոս միշտ գովեստով կը խօսուի։

Օր. Հայկանուշ Որդունի դաշնակի վրայ եւ Պ. Հերթման ջութակի ընկերակցութեամբ նուագեցին քանի մը դժուարին կտորներ։ Տիկ. Իվանով(ռուս) Մասընէէն երգեց գեղեցիկ արիա մը կատարեալ յաջողութեամբ։

Ամէնն ալ պսակուեցան բուռն ծափահարութիւններով։

Ցիշատակելու արժանի է նաեւ ուսանողական երկսեռ երգեցիկ խումբի սիրայոժար ներմ մասնակցութիւնը։

Սրահը լիքն էր. հանդիսականները մեկնեցան շատ լաւ տպաւորութեան տակ։

Կարգադիր մասնախումբի ջանքերը գնահատելի եւ գովելի են։ Հասոյթը 2 000 ֆր. ի մօտ պիտի ըլլայ։

Ամէն ինչ լաւ էր... բայց Նուագահանդէսին ամբողջ նիւթը առնուած էր ֆրանսական եւ իտալական բեբերմուարէն. հայկական գոյն կրող եւ ոչինչ կար։ Մինչեւ իսկ յայտարարութեան վրայ նշանակուած էր «ի նպաստ Փոքր-Ասիոյ սովեալներուն»... Զարմանալի բանաղատ վայր մը,... ի՞նչ նկատումներ կրնան ստիպել քօղարկելու բուն նպատակը։ Ատիկա ներելի չէ։ Մի՞թէ Մեծ-Մարդասպանին ապստամբ ժողովուրդը չենք. զո՛նէ ատով հպարտ ըլլալու ենք։

* * *

Սօպրանիէի աղմկալի նիստերը կը շարունակուին։ 3—4000 հետաքրքիր ունկնդիրներ միշտ գրաւած են խորհրդարանի լօժերը եւ կալերիները։ Բացումէն ի վեր կատաղի կռիւ մը կը մղուի ազատական եւ ընդդիմադիր կուսակցութիւններու մէջ։ Նախագահի ընտրութեան օրը եւ եթ որոշուեցաւ երեք յանձնաժողով կազմել. 1. Գահական ճառին պատասխանելու, 2. Կատարուած ընտրութիւնները քննելու, 3. Եւրոպական պանքաներու հետ նոր կնքուելիք փոխառութեան պայմանները ուսումնասիրելու եւ քննելու, որ վերջը Սօպրանիէն իր վերջնական քուէն տայ։

Երրորդ յանձնաժողովի ընտրութեան առնը Քարավէլովի եւ Ցանքովի ալ առաջարկեցին ազատականները ընտրուիլ. վերջիններս հրաժարեցան, առարկելով թէ անձեռնհաս են ֆինանսական խնդիրներու մէջ։ Մինչդեռ, նախատինք ու հեգնութիւն մը փրթաւ ամէն կողմէ։

Շարաթէ մը աւելի է, որ ժողովը կը զբաղի կատարուած ընտրութիւններու քննութիւնով։ Շատ մը ապօրինութիւններ երեւցան, որ կատարուեր են ընտրութիւններու առթիւ, մանաւանդ ընդդիմադիր կուսակցութեան կողմէն։ 9 երեսփոխանի ընտրութիւն արդէն անվաւեր է դատուած եւ բեկանուած։

Մայիս 26 էն ետք նիստերը այնքան աղմկալի կանցնին, այնքան խառնակութիւն կառաջանայ, որ նոյն իսկ անդամ մը աղմկող դիմադիրները կարգի բերելու համար հարկ եղաւ զինուորական ուժի դիմել։

Ընտրութիւններու քննութիւնը կը շարունակուի։ Լաւ կայ որ Թաքէվի ընտրութիւնն ալ պիտի բեկանուի։ Մայիս 26ին ոչնչացուցին Բիզօվի ընտրութիւնը. հետեւեալ օրերը՝ Ֆիլիբօվինը եւ Ցանէվինը, որ Քարավէլովի բաղուկներն էին։

Տ.

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Ինչպէս Թաւրիզի մեր թղթակիցը մեզի գրած է, այնտեղի Լիլաւա թաղի երկսեռ դպրոցներու վարչութիւնը վճռած է քննութիւններ չընել տարեվերջին։

Թողնենք ուսուցչական խումբին յայտարարութեանը բացատրելու մեղի այդ որոշման դրդիչ պատճառները.

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Լիլաւա թաղի երկսեռ դպրոցների վարչութիւնը ո՛չ մի նշանակութիւն չտալով քննութիւններին և ճանաչելով ուսումնարանի ու ընտանիքի սերտ յարաբերութեան բարերար ազդեցութիւնը, դեռ Նոյեմբեր 8ին և Մարտ 14ին ծնողներին ու խնամակալներին հրաւիրած ժողովներում առաջարկել և յորդորել է նրանց հասարակ օրերում դպրոց գալ դասեր լսելու։

Այժմ պաշտօնապէս յայտարարում է վարչութիւնս, որ մանկավարժական և առողջապահական տեսակէտից քննութիւնների վնասակարութիւնն աչքի առաջ ունենալով՝ վճռել է քննութիւն չանել և դրա փոխարէն դասաւանդութիւնը շարունակել մինչեւ Մայիս ամսի վերջը։

Ինչպէս յիշեալ ժողովներում ասել ենք, սրանով նորից կրկնում ենք, որ դպրոցի դռները ամէն ժամանակ բաց են ծնողների, խնամակալների և ընդհանրապէս հասարակութեան իւրաքանչիւր անհատի առաջ. եթէ ցանկանում են մատաղ սերնդի կրթութեան ու դպրոցների յառաջադիմութեան հետ ծանօթանալ, դրա համար՝ վարչութեանս խորին համոզմունքով՝ ամենալաւ միջոցն է օրական դասերին ներկայ գտնուել։

Դասերը լսել ցանկացողներին խնդրւում է նախապէս յայտնել Պ. տեսչին։

Վարչութիւն

Դաւրէժ, 1 Ապրիլ 99

Ծանօթ. — Առաւօտեան դասերը սկսում են եւրոպ. ժամը 8ին, վերջանում 11ին։

Կէս օրից յետոյ դասերն սկսում են եւրոպ. ժամը մէկ ու կէսին, վերջանում երեք քառորդ անցած։

Լաւ կըլլար եթէ մեր Պուլկարահայ վարժարաններն ալ օրինակ առնէին Թաւրիզի Լիլաւա թաղի դպրոցէն. մանկավարժական զրուցատրութիւններ ունենային սաներու ծնողներուն հետ, լսարանի մը պէս հիմնարկութիւն հաստատէին և վերջէն ալ քննութիւնները ջնջէին իբր ֆասակար ու անմիտ կարգ մը։

— Բագուաբնակ հայ հարուստ մը՝ Պօղոս Յ. Ղուկասեան, 3000 ռուպլի դրած է Երեւանի բարեգործական ընկերութիւնի բարեհաճ տրամադրութեան տակ չքաւորներուն և կարօտեալներուն օգնելու համար։

— «Մշակի» Ուրմիոյ (Պարսկաստանի) թղթակիցը կը հաղորդէ, որ հոն ցորենի գիներու թանգութիւնը սկսած է մեղմանալ, չնորհիւ վերջին ատեններս եկած անձրեւներու։ 135 օխան կը ծախուի 144—168 դահեկանով։ Ցոյս կայ որ գիներն աւելի պիտի իջնան։

— Սրբազան Խորէն Ստեփանէն, որ քանի մը տարի առաջ հայ գրականութիւնը հարստացուց իր «Մովսէս Խորենացիի» աշխարհաբար թարգմանութիւնով և բազմաթիւ ծանօթութիւններով, այժմ ալ պիտի լոյս ընծայէ Փաւստոս Բիւզանդացիի հայոց պատմութիւնը, նոյնպէս ծանօթագրեալ։ Նկատելով որ Խորենացիէն ետքը էն ինքնուրոյն, անկախ և ազատ մատենագիրը մեր հին դպրութեան մէջ Փաւստոս Բիւզանդացին է՝ մենք չենք կարող չողջունել արիաշան ու լուսամիտ հոգեւորականին այդ գործը։

— Տ. Էրրիգօ Վիդօ (Անատոլիո Լատինօ) իտալացի հայագէտը Ֆլորանս քաղաքին մէջ հրատարակած «Եւրոպական հիւպատոսարանները և գաղթականութիւնները Օթոման երկիրներու մէջ»

բնութեան օրէնքը, էվոլիւցեա՛ն...

* * *

Այս տխուր պատկերներից եւ իրողութիւններից կարելի է եզրակացնել թէ ի՞նչ է լինելու պարսկահայերիս ապագան։ Դեռ մօտաւոր ապագայում յոյս չունինք, որ բնութեան օրէնքը իր բարի արդիւնքները պիտի արտադրէ։ Փորձառական գիտութիւնը մեզ պարզ ցոյց է տվել, թէ բնութիւնը շատ դանդաղ է գործում, բայց վերջապէս յաղթող է հանդիսանում։

Ուրեմն, մօտաւոր ապագայում պարսկահայերի մէջ չէ կարելի յուսալ ցանկալի առաջադիմութիւն եւ զարգացում. միակ յոյսը որ կայ, աղնիւ, առաջադէմ եւ ազատամիտ կուսակցութեան վրայ է մնում. նա պէտք է ոյժ տայ բնութեան ուժեղ՝ բայց դանդաղ շարժումներին, որպէս զի զանգրէնացած, փթած անդամները արագ ոչնչանան...։

Թաւրիզ, 9 Մայիս

Թաւրիզու դպրոցները

Նախորդ թղթակցութեանս մէջ Ղալա թաղի յետադէմ ուսուցիչների մասին բաւական տեղեկութիւն հաղորդել էի, միայն մոռացել էի յիշել մի փաստ, որը անհերքելի կերպով ապացուցանում է այդ ուսուցիչների անքարեխիղճ վարմունքը։ Այս տեղ պարտականութիւն եմ համարում յայտնել, թէ Ղալայ թաղի ուսուցչական խմբի բոլոր անդամներին չեն պատկանում իմ գրածները... Նրանց մէջ կան տեղացիներ եւ օտարականներ. տեղացիների մէջ աչքի են ընկնում իրենց անպարտաճանաչ եւ անքարեխիղճ վարմունքով տեսուչը՝ Ա. Ա. եւ ուսուցիչներից Մ. Շ., Ն. Տ. Օ., եւ օտարականների մէջ Ս. Ա.։ Սրանք, բոլորովին զուրկ մանկավարժական ամենատարրական տեղեկութիւններից, լոկ իրանց վիզն են ուզում հաստացնել, իրանց քաղցած փորերը կշտացնել. հողարարձուների առաջ քծնում, սողանում են, որպէս զի իրանց հացի խնդիրը չը վտանգուի։ Նոյն նպատակով դիմում են ամենակեղտոտ միջոցների եւ մատաղ սերընդին փչացնում են իրանց ստոր եւ պախարակելի վարք ու բարքով, յետադիմական գաղափարներով եւ պարսկատիպ կեղծաւորութիւններով։

Այո՛, մոռացել էի յիշել, որ այս տարուայ ակի ժամանակ տեսուչը ամօթ չզգաց եւ չը կարմրեց յայտարարելու, թէ ուսումնական տարեշրջանում 150 դա՛ս բաց է մնացել, 150 ժամ գողացել է աշակերտների թանկագին ժամանակից, առանց բանաւոր պատճառների. եթէ բանաւոր եւ պատահական պատճառներով բաց մնացածներն էլ յիշելու լինինք, բաց ժամերի թիւը պիտի հասնի մի ահագին քանակութեան, որով կարող ենք իմանալ աշակերտների կրած զրկանքը եւ դպրոցում տիրող մտաւոր սնանկութիւնը։

Միւս կողմից, ուրախ եմ յայտնելու, որ Լիլաւա թաղի դպրոցը, Սուսանեան խմբի հեռանալովը եւ նոր ուսուցչական խմբի վարձվելովը՝ այս տարի շատ բարձր դիրքի վրայ է կանգնած։ Լիլաւայի ուսուցչական խումբը, բացի մէկից, բոլորն էլ Կովկասցի հայեր են, բոլորն էլ իրանց պարտականութեանց գիտակից եւ խղճաւոր, մանկավարժական մէթոդներին ընտելացած եւ աշակերտների առաջադիմութիւնը ցանկացող։ Երկուսը արդէն համալսարանականներ են, մէկը Գերմանիայից եւ միւսը Շվէյցարիայից, եւ ուսուցչուհիներից մէկն էլ Շվէյցարացի մի տիկին է, բարձրագոյն դպրոցից վկայեալ։

Լիլաւայի ուսուցչական խմբի առաջադիմասէր ոգին եւ մանկավարժական նորագոյն ծանօթութեանց հմուտ լինելը ապացուցանելու համար՝ առաջ եմ բերում հետեւեալ տնօրինութիւնը։

Ուսուցչական խումբը իր մանկավարժական ժողովներում լուրջ վիճաբանութեան ենթարկելով տարեվերջի քննութեան խնդիրը, միաձայն որոշեց, որ քննութիւն կատարելը ոչ մի միտք չունի. քննութիւնները լոկ ձեւական բաներ են հասարակութեան աչքը կապելու համար, որ աշակերտների ֆիզիքականը ծանր կերպով տուժում է, եւ որ եւրոպայում արդէն ընդունված լինելով քննութիւնների վնասակարութիւնը, հաստատված բժշկական փորձերով եւ ցաւալի դէպքերով, վճռում է քննութիւն չը կատարել, այլ դպրոցի դռները միշտ բաց թողնել հասարակութեան առաջ. որը երբ կամենայ՝ կարող է այցելել եւ ներկայ գտնվիլ դասախօսութիւններին, սատ գելու համար աշակերտների յառաջադիմութիւնը։

ՄԻՐԶԱ

խորագրով նոր գիրք մըն է հրատարակեր, որու մէջ կը խօսի նաեւ իր մէկ յայտնի գրութեան մասին, որ կը կրէ “Հայաստան և Զէյթուն„ խորագիրը։

— Մանչեսթըրի հայ գաղութը 200 անգլ. ոսկի ղրկած է Պատրիարքարան Վանի սովեալներուն համար։

— Քէչանի յոյն գայմագամը՝ Աթանաս էֆէնտի՝ նշանակուեր է Զէյթունի գայմագամ։

— Իտալացի իրաւաբան մը Բարիզի մէջ հրատարակեր է գրքոյկ մը “Եւրոպական գօնսէրը և Հայկական խնդիրը„ խորագրով։ Հեղինակը (Լաֆրանգօ Պելլէկօդի) Պ. Զերազի թերթին ղրած նամակով մը կը յայտնէ իր վճռական որոշումը շարունակել հայ դատի պաշտպանութիւնը։

— Բարիզի հայ գաղութը 3,100 ֆր. ղրկած է Պատրիարքարան Վանի սովեալներուն համար։

— Գերմ. “Նացիօնալ Ցայթունկ„ թերթին Լահէյէն կը գրեն հետեւեալը.

Խաղաղ. Ժողովի պարզ երկնակամարին վրայ “մութ ամպեր„ կը հաւաքուին Հայերու և Երիտասարդ Թուրքերու պատճառով։ Տեղական մամուլը կատաղի լեզուով յարձակումներ կընէ կառավարութեան դէմ, որ արգիլած է հայ բրօֆեսոր Պ. Մ. Զերազի հրապարակային դասախօսութիւն մը կարդալ Թուրքերու գործ դրած գազանութիւններու մասին Հայաստանի մէջ վերջին ատենները։

Թերթը, շարունակելով իր տեղեկութիւնները, կը յայտնէ, որ Թրքական պատուիրակները կըսպառնան թողնել ժողովը, եթէ Պ. Զերազի կամ Երիտասարդ Թուրքերու թոյլ տրուի հրապարակային դասախօսութիւններ կարդալ։ Կը պատմէ Քոյեբրի և Լիֆտինքի ցցուցած աջակցութիւնները Պ. Զերազի եայլն։

Մեզի կը թուի որ Թուրխան փաշայի ժողովին մէջ մնալը խիստ անհրաժեշտ է։ Ռուսական թերթերն արդէն կը հաղորդեն, որ Թրքական պատուիրակները վճռապէս յայտնած են իրենց պետի հրամանը, թէ Թուրքիա երբէք չի կրնար պակսեցնել իր զօրքերու թիւը։

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

Մեր գործակալներէն ու բաժանորդներէն խմբագրութիւնս կը խնդրէ փութացնել բաժնեգիններու առաքումը։

Ստիպեալ պիտի հրատարակենք չվճարողներու անունները։

——)·(——

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՄԱԿԵԴՈՆԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ. — Տեղական “Նօվ Օդզիվ„ թերթը, որ կը սիրէ “խոշոր նորութիւններ„ հաղորդել, գրած էր թէ Մօնասթրի նահանգին Բրիլիբ գաւառին մէջ մեծկակ ապստամբութիւն մըն է ծագեր. Թուրք զօրքեր կեդրոնացեր են, ապստամբները կը կռուին և այլն։ Մակեդոնական վարիչ մարմինէ ստացած նամակը և հեռագիրը դրականապէս կը հերքեն այդ լուրը այդ ձեւով։ Գործը խիստ հասարակ ու բնական բան մըն է Թուրքիոյ համար։ Ինչպէս անցեալ օրերը հաղորդած էինք, քաղելով “Թայմզ„էն, Բրիլիբի քովերը երեւցեր է Մակեդոնական հայդուկային խումբ մը կամ “չէտա„ մը, 30—35 հոգիէ բաղկացեալ, որ ընդհարում մըն է ունեցեր թուրք զօրքերու հետ։

Այդ առթիւ “Թան„ի կը հեռագրեն Պոլսէն Մայիս 29ին. “Թրքական զօրքերու և պուլկար խումբերու մէջ Բրիլիբի քով եղած ընդհարման պատճառով Մօնասթրի վալին 3 գունդ զօրքով քննեց քաղաքը և կարգը վերահաստատեց. կան բազմաթիւ սպաննուածներ։

Մեծ Եպարքոսը պուլկար գործակալին դիտողութիւններ ըրաւ և կրկնեց Սուլթանի խնդիրքը Ֆերտինանտ իշխանին՝ կարգը պահպանել, մանաւանդ երբ Խաղ. Ժողով մը կայ Լահէյի մէջ„։

— “Բայխսպօթ„ի Մայիս 27ին Սոֆիայէն կը հեռագրեն հետեւեալը.

“Երէկ երեկոյ Պոլսէն հոս հասած հեռագիր մը կը ծանուցանէ թէ Սուլթանը ծանր հիւանդ է։ Եըլտըզի մէջ մեծ իրարանցում մը կը տիրէ„։

Ռումէն թերթերը կը հերքեն այս լուրը։

— „Բօլ. Քոր.„ կը հաղորդէ.

“Թուրք կառավարութիւնը խիստ զբաղած է ռուս զօրքերու Հայաստանի սահմաններու քով կեդրոնացնելու երեւոյթով։ Կը վախնան որ, եթէ Թուրքիա չկրնայ վճարել վերջին պատերազմէ մնացած պարտքի յետամնաց հատուցումները, Ռուսիա առիթէն պիտի օգտուի և Հայաստանը գրաւէ„։

ԹՈՒՐՔԻԱ. — Թուրք կառավարութեան անվստահութիւնը դէպի ասիական նահանգները այցելող բոլոր օտարականները կը շատնայ։ Արտաքին գործոց նախարարութեան պահանջով հրամայուեցաւ կրթութեան նախարարին այլեւս թոյլ չտալ օտարականներուն “հնագիտական հետազօտութիւններու պատրուակով„ շափչփել պետութեան ներքին նահանգները։ Այսուհետեւ այդ տեսակ ամէն խնդիր կը յանձնուի նախարարութեան յատուկ մասնախումբերէն մէկուն՝ խնդրատուի անցեալը, վստահելիութիւնը և այլ պարագաները ուսումնասիրելու և ետքէն թոյլտուութիւն ընելու, ան ալ միայն որոշակի շրջանի մը համար։ Պարզ է որ ասիկա քօղարկուած արգելք մըն է։ Անոնք որ կը ճանչնան թուրք վարչութեան դանդաղութիւնը ամէն գործի մէջ՝ կը հասկնան, որ նախարարութեան յատուկ մասնաժողովին դիմելը հաւասար է մերժումի մը։ Յաճախ պէտք է սպասել տարի մը՝ խնդրած թոյլտուութիւնը ստանալու համար։

— Պոլսէն կը հեռագրեն “Թան„ի Մայիս 30ին.

“Դուռը շրջաբերական մըն է ղրկեր Կրետէի խնամակալութիւնն ստորագրող չորս պետութիւններուն և յայտներ է, որ եթէ կրէտական մաքսը կը շարունակէ թրքական ապրանքներէն նոյնքան մաքս առնել, որքան և օտար ապրանքներէն՝ Թուրքիան ճնշումներ պիտի բանեցնէ„։

— “Նօվօէ-վրէմիա„ ռուս թերթի կարծիքով ռուս շահերու համար չափազանց վտանգաւոր է Գերմանիոյ կողմէն շինուելիք երկաթուղիները Փոքր-Ասիոյ և Միջագետքի մէջ. Ռուսիա պարտաւոր է ամէն միջոց գործ դնելու և այդ շրջաններէն վանելու գերման ազդեցութիւնը։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Անցեալ օրերը ատրճանակ մը գնելու առեն պուլկար մը զոհ գնաց վաճառականին անզգոյշ բայց միամիտ վարմունքին։ Ատրճանակը պարապ կարծելով վաճառողը փորձ ընել ուզած է ապրանքին աղէկութիւնը ցուցընելու համար։ Մէջը փամփուշտ մը եղած է, որ պայթած ու սպաննած է գնողը։

— Հինգշաբթի երեկոյ տեղիս Մայր եկեղեցու դիմացի արձանիքով խումբ մը անցորդներ ժամը 11ի ատեններ անտէր ձգած նորածին մանկիկ մը գտան, որ իսկոյն յանձնեցին ոստիկանութեան։

ԵՐԿՐՈՐԴ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ
Ի ՆՊԱՍՏ
Վանայ Սովեալներու

Ժողովրդի ցանկութիւնով կը խաղացուի երկրորդ անգամ ՎԱՆԱՅ ՀԱՅԴՈՒԿՆԵՐ, Յունիս 12ին, շաբաթ օրը, Անկէլ Սլավօֆի սրահին մէջ։

Գիները չափաւոր. 50 սանթիմէ մինչեւ 5 ֆրանք տոմսակներ։

Տոմսերը վճռուած է տուներ չղրկել. ցանկացողները կարող են գնել Տ. Յովսէփ Բարսամեանի վաճառատունէն։

Ելեւմուտքի վերահսկող յանձնախումբը բաղկացած է Տ. Տ. Տօքթ. Աթաբէկեանէ, Յ. Բարսամեանէ և Տիգրան Աճէմեանէ։

——)·(——

ԺՈՂՈՎՐԴԻ ԲԱՆԱՍՏԵՂԾԸ
Քամառ-Քաթիպաճ
Գրեց ԲԱԲԱ-ԴԱՄԳԱՐ.

Պուլկարիոյ մէջ գինը 50 սանթիմ, իսկ արտասահմանի համար 60 սանթիմ։

Ցանկացողները թող դիմեն Շարժումի խմբագրութեան։

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՇԱՐԱՆ «Կ. ՊՈԼԻՍ»
Ի Ռուսչուք

Պատիւ ունիմ ծանուցանելու արգոյ յաճախորդներուս թէ՝ ճաշարանս փոխադրած եմ «Օթէլ Պօլիս»ի կարգը «Օթէլ Քրում-Աւէն»ի ներքեւ, ուր ըստ առաջնոյն խնամով կը պատրաստուին արեւելեան եւ եւրոպական համատամ կերակուրներ։

Մաքրութիւն, արագ սպասարկութիւն, չափաւոր գին։

1—3 Վահան Մամիկոնեան

„ԲԱՆԱՍԷՐ“

Հանդէս Հնախօսական, Պատմական, Լեզուաբանական եւ Քննական։

Տնօրինութեամբ Պ. Կ. Յ. ԲԱՍՄԱՋԵԱՆԻ.

Տարեկան 20 ֆրանք ամէն տեղ 4 գրքի համար, իսկ մէկ գիրքը, 100 էջով, 6 ֆրանք։

Հասցէ՝
M. Basmadjian
112, B-d Rochechouart, 112
Paris

„ՀԱՅՐԵՆԻՔ“

Ազգային շաբաթաթերթ, տարեկան մէկուկէս տոլար, իսկ արտասահմանի համար 10 ֆրանք։

Հասցէն՝ Խմբ. Հայրենիքի
628 Third Avenue
New York City
(U. S. A.)

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ „ՇԱՐԺՈՒՄ“Ի

Կը տպագրուին ամէն լեզուէ այցետոմս, հասցէտոմս, նամակագլուխ, հարսանեկան հրաւիրագիր, մահազդ, ինչպէս նաև պրօշիւրներ։

Գիները յոյժ դիւրամատչելի։

Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշդութեամբ և փութով կը կատարուին։

ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԱՆԽԻԿ

ԿՈՒԶԷ՞Ք ՀԱՐՍՏԱՆԱԼ

Դիմեցէ՛ք
Մ. Թիւթիւնճեան եւ ընկ.
ի Ռուսճուք

Ուր ըստ առաջնոյն կը վաճառեն, Սոֆիա քաղաքի՝ Պուլկարական կառավարութեան կողմէ վաւերացած վիճակահանութեան Բ. շրջանի տոմսակները։

Օտար երկիրներէ յանձնարարութիւններ եւս կընդունուին։

Отговорникъ: А. СУКЯСОВЪ

Печатница „Взаимность“ Варна.